ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025թ. թիվ 601-Ա

ԿԱՐԻՆԵ ՌԱՄԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 49-րդ կետով, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ս.Սպանդարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ. Ռամազյանի 06.10.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանաքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված պարտականությունների խախտման համար «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ս.Սպանդարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ. Ռամազյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Մ.Նահապետյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի և ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, ինչպես նաև պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 14
ք.Վանաձոր